21.06. [illegible] 5 [illegible]

2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքի N2 հիմնական դպրոցի 8-րդ <<ա>> դասարանի ղեկավարի հաշվետվություն

Դասղեկ՝ Ս.Մելիքսեթյան

1.2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարվել են ուսումնադաստիարակչական հետևյալ աշխատանքները՝

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ ,միջավայր,համապատասխան կահավորում:
  - Ամրացրել ենք փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
  - Աշակերտների մեջ խորացրել ենք սերը ուսման,հայրենիքի,դպրոցի նկատմամբ:Սերմանել ենք աշխատասիրություն,պարտաճանաչություն,և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
  - Սովորեցրել ենք գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները,ժամանակին շտկել դրանք:
  - Դաստիարակել ենք հարգանք մեծերի նկատմամբ,ուշադրություն՝ փոքրերի:
  - Կարևորել ենք անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Քաջալերել ենք աշակերտներին , խրախուսել նրանց ձեռքբերումները և շտկել բացթողումները:
- Կազմակերպել ենք ինքնազարգացման գործնական աշխատանքներ:
- Դասարանում ապահովել ենք խաղաղ, դրական միջավայր:
- Կազմակերպել ենք միջոցառումներ , էքսկուրսիաներ, արշավներ, զբոսանքներ:
  - Ձևավորել ենք հայրենասեր,ազգանվեր,կրթված,ընկերասեր,անձնազոհ անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու:
  - Կատարել դասալսումներ ,ծնողական ժողովներ,ուստարվա ընթացքում ամուր ենք պահել աշակերտ-ծնող-դպրոց կապը:

Կազմակերպել և անցկացրել ենք թեմատիկ հետյալ դասղեկական ժամերը՝

1.Զրույց ՝<Մաքուր պահենք շրջապատը և դասարանը>>

2.Խնամել դասասենյակի ծաղիկները

3.Զրույց՝ <<Անձնական հիգիենայի կարևորությունը>>

4.ա/Զրույց՝ <<Անկախության 31-ամյակ>>,

բ/զինվորական երդում՝ հրթիռահրետանային օրվան նվիրված

գ/Ռաֆայել Ղազարյանի հիշատակին նվիրված դասասենյակի բացում

5.Զրույց ՝<<Ուսուցչի օր>>

6.Զրույց ՝ <<Սպորտը մեր կյանքում>>

7.Բաց դաս ՝<<Պետրոս Դուրյան>>

8.Զրույց՝ <<ՁԻԱՀ և ՄԻԱՎ >>հիվանդություններից պաշտպանվելու օրվան նվիրված

9.Զրույց՝<<Երկրաշարժի օր>>

10.ա/Ամանորյա ձևավորում

բ/Ամանորյա պարահանդես

11.Զր.՝ <<Հայոց բանակը 31 տարեկան է>>

12.Պաստառների ձևավորում՝ նվիրված <<Մայրենիի օրվան>>

13.<<Խոսում ենք բարբառով>> մրցույթի մասնակցություն

14.Զրույց <<Կանանց օրը>>

14.Էքսկուրսիա Երևան

15.Շաբաթօրյակ

16.Զրույց<<Հնարավորություններ հարթակ>> կոնֆերանսի մասնակցություն

15.Դպրոցականների տարածքային փուլի մասնակցություն

16.Մայիսյան տոներ

17.Վերջին զանգ

2021-2022 ուստարվա կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն

8-րդ <<ա>> դասարանը ուստարվա սկզբին բաղկացած էր 27 աշակերտից՝ 15 տղա, 12 աղջիկ: Տարվա սկզբին ունեցել ենք 3 գերազանց և 11 առաջավոր աշակերտ:Դասարանի առաջադիմությունը եղել է 100 %,որակը՝ 50 %:

Դասարանը կազմակերպված է, համախմբված, ակտիվ և պատասխանատու Դասարանում հիմնականում տիրում է խաղաղ մթնոլորտ, չնայած երբեմն կան տարաձայնություններ, հակասություններ:

Սիրում են մասնակցել տարատեսակ միջոցառումների,մրցույթների:

Սեպտեմբերին 8-րդ <<ա>> դասարանի մի շարք աշակերտներ մասնակցեցին <<Երեք սրբության զավակներ>> առցանց նախաձեռնությանը,ստացան հավաստագրեր:Հոկտեմբերի 19-ին անցկացրին միջոցառում՝ նվիրված <<Հրթիռահրետանային օվան>> և դասասենյակի բացմանը:Կազմակերպվեց բաց դաս <<Պետրոս Դուրյան >>թեմայով:Փետրվարի 21-ին մասնակցեցին <<Մայրենիի օրվան>> , Հովհաննես Թումանյանի 153-ամյակին նվիրված, <<Եթե ես լինեի սուպեր հերոս >>շարադրությունների մրցույթին և <<Խոսում ենք բարբառով>> մրցույթին :

Աշակերտներից մի քանիսը լավ ասմունքում են,նկարում,երգում:

8-րդ <<ա>> դասարանի ակտիվ աշակերտները մասնակցեցին նաև առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին:

Ուստարվա ավարտին 8<<ա>> դասարանում սովորում են 26 աշակերտ:Դասարանի առաջադիմությունը 100 % է,որակը՝ 38: Ունենք 4 գերանց և 6 առաջավոր աշակերտ: